Տեղեկանք

Ղարիբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործի վերաբերյալ

ՀՀ կառավարության որոշմամբ 2005թ-ին պետության կարիքների համար վերցվել է Բուզանդի 25 հասցեում գտնվող **44.1ք.մ.** մակերեսով բնակարանը: Սեփականատերեր Գ. Ղարիբյանին, Գ. Ղարիբյանին և Ա. Ղարիբյանին որպես փոխհատուցում առաջարկվել է **16,350** ԱՄՆ դոլար (գույքի գնահատված արժեքը) և ևս **12,638.55** ԱՄՆ դոլար, որպես խրախուսում, եթե պայմանագիրը ստորագրվի 5 օրվա ընթացքում (ընդհանուր առմամբ **28,988.55** ԱՄՆ դոլար):

Սեփականատերերը առաջարկը մերժում են, և կառուցապատողի բողոքի հիման վրա 01.03.2005թ. Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը պարտավորեցնում է նրանց կնքել պայմանագիր՝ **16.350** ԱՄՆ դոլար գումարով:

01.06.2005 դիմումատուները հայց են ներկայացնում ՄԻԵԴ՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության, պնդելով, որ խախտվել են Կոնվենցիայի 8-րդ հոդվածով և 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանված իրենց իրավունքները:

28.11.2007 գործն ուղարկվում է ՀՀ կառավարությանը:

Կառավարությունը դիմումատուներին առաջարկում է հաշտության համաձայնագիր կնքել և ՄԻԵԴ-ից նրանց հայցը ետ վերցնելու և նրանց արդեն իսկ վճարած **16.350** ԱՄՆ դոլար գումարը վերադարձնելու պայմանով՝ նրանց տրամադրել իրենցից վերցված (44.1ք.մ.) բնակարանից 30 մետր հեռավորության վրա (Բուզանդ-Կողբացի խաչմերուկում) կառուցվող շենքից 120 ք.մ. մակերեսով բնակարան և 2005թ. օգոստոսից մինչև տվյալ շենքի շահագործման հանձնելը ամսական 120.000 ՀՀ դրամ՝ որպես այլ բնակարան վարձակալելու համար վարձավճար (ընդհանուր 7.200.000 ՀՀ դրամ), կամ վճարել **19.080.000** ՀՀ դրամ և վարձավճարի գումարը:

Այս առաջարկը ևս մերժվում է և պահանջվում՝ առնվազն կրկնապատկել առաջարկվող գումարը:

ՄԻԵԴ-ը կառավարությունից պահանջում է հստակեցնել որպես փոխհատուցում առաջարկվող բնակարանի տվյալները: Հարցմանն ի պատասխան կառավարությունը տեղեկացնում է, որ որպես փոխհատուցում դիմումատուներին առաջարկվող կոնկրետ բնակարանը **115.6 ք.մ.** է, և դրա կոնկրետ հասցեն է՝ **Ամիրյան 4/6 շենք, բնակարան 63,** և ՄԻԵԴ է ուղարկում բնակարանի սեփականության վկայականը:

Հաշտության համաձայնության հասնելու անհաջող փորձերից հետո կառավարությունը 10.09.2010 հանդես է գալիս Միակողմանի հայտարարությամբ՝ ընդունելով, որ խախտվել են դիմումատուների Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանված իրավունքները և պահանջելով ՄԻԵԴ-ից դադարեցնել գործի քննությունը և առաջարկում է դիմումատուներին տրամադրել նշված բնակարանը՝ որպես փոխհատուցում նրանց կրած ամբողջ վնասի համար:

27.10.2010 ՄԻԵԴ ուղարկված նամակով դիմումատուները մերժում են կառավարության միակողմանի հայտարարությունը, նշելով, որ նշված բնակարանը չի հանդիսանում արդարացի փոխհատուցում իրենց կրած վնասի համար և պահանջում են 115.600.000 ՀՀ դրամ (մոտ 230.000 եվրո)՝ որպես նյութական վնասի փոխհատուցում և 70.000 եվրո՝ որպես բարոյական վնասի փոխհատուցում, ինչպես նաև ՄԻԵԴ-ից պահանջում են փաստաբանական ծախսերի փոխհատուցում:

15.11.2011 ՄԻԵԴ-ը, հիմք ընդունելով կառավարության միակողմանի հայտարարությունը, կայացնում է որոշում, որով դադարեցնում է գործի քննությունը և պարտավորեցնում է կառավարությանը դիմումատուներին տրամադրել նշված բնակարանը:

Կառավարությունը հայտնում է իր պատրաստակամությունը՝ տրամադրել դիմումատուներին նշված բնակարանը, և պահանջում է վերադարձնել արդեն իսկ վճարված 16.350 ԱՄՆ դոլար գումարը:

Դիմումատուները հրաժարվում են վերադարձնել **16.350** ԱՄՆ դոլար գումարը, պատճառաբանելով, որ ՄԻԵԴ որոշման մեջ դրա վերադարձի վերաբերյալ նշում չկա և պահանջում են իրենց տրամադրել բնակարանը՝ առանց նշված գումարը վերադարձնելու:

26.03.2012 դիմումատուների ներկայացուցիչ փաստաբան Ա. Գրիգորյանը նամակ է ուղարկում ՄԻԵԴ՝ պահանջելով վերսկսել գործի քննությունը, քանի որ, ըստ նրա, կառավարությունը հրաժարվում է իրենց տրամադրել նշված բնակարանը՝ առանց իրենց կողմից **16.350** ԱՄՆ դոլար գումարը վերադարձնելու:

10.07.2012 ՄԻԵԴ-ը որոշում է կայացնում վերսկսել գործի քննությունը: Դիմումատուներն իրենց փոխհատուցման պահանջում ՀՀ կառավարությունից պահանջում են **115.600.000** ՀՀ դրամ (**մոտ 230.000** եվրո)՝ որպես նյութական վնասի փոխհատուցում և 70.000 եվրո՝ որպես բարոյական վնասի փոխհատուցում (ընդհանուր առմամբ մոտ 300.000 եվրո), նաև ՄԻԵԴ-ից պահանջում են փաստաբանական ծախսերի փոխհատուցում:

ՀՀ կառավարությունը ներկայացնում է իր առարկությունները, և 13.11.2014 ՄԻԵԴ-ը վճիռ է կայացնում նշված գործով: Համաձայնելով կառավարության այն դիտարկման հետ, որ փոխհատուցումը պետք է հաշվարկել դիմումատուների՝ իրականում կրած վնասը հաշվի առնելով, վճռում է, որ ՀՀ կառավարությունը դիմումատուներին պետք է վճարի **34.000** եվրո՝ որպես նյութական վնասի փոխհատուցում և **18.000** եվրո՝ որպես բարոյական վնասի փոխհատուցում, ընդհանուր առմամբ՝ 52.000 եվրո գումար:

Ամփոփում- ՀՀ կառավարությունը դիմումատուներին առաջարկում է իրենցից վերցրած 44.1 ք.մ. մակերեսով բնակարանի դիմաց տրամադրել 115.6 ք.մ. մակերեսով բնակարան՝ պահանջելով վերադարձնել արդեն իսկ վճարված 16.350 ԱՄՆ դոլար գումարը: Դիմումատուները հրաժարվում են վերադարձնել 16.350 ԱՄՆ դոլար գումարը՝ կառավարությունից պահանջելով մոտ 300.000 եվրո գումար:
Եվրադատարանը դիմումատուների հայցը բավարարում է՝ փոխհատուցման համարժեք գումար համարելով 52.000 եվրոն: